ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

28.5.2016 թ.
1112/21696-16

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ ս.թ. մայիսի 17-ի թիվ 282-ի 4 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ ԱԳՆ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկատվություն ստանալու մասին հարցումները չեն գրանցվում որպես գրության առանձին տեսակ սակավաթիվ լինելու պատճառով, սակայն Ձեր հարցադրումը մեզ հուշում է, որ հաշվառման համար առավել արդյունավետ կլինի դրանց առանձնացումը, ինչի հնարավորությունը էլեկտրոնային համակարգը տալիս է:

Տեղեկատվություն ստանալու մասին ստացված հարցումների գրանցման և դասակարգման համար ՀՀ ԱԳՆ առաջնորդվում է ՀՀ կառավարության՝ Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին 2015թ. հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախարարության կայքում հրապարակված է տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձեւը (տես հղումը՝ http://mfa.am/hy/inquiry/):

Հարգանքով՝

May 27 2016 6:01 PM

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

ELECTRONIC SIGNATURE IS VALID

Կատարող՝ Աննա Նաղդալյան
Հեռ.՝ 060.620.201